ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորական ուղերձը
Մարտի 8-ի կապակցությամբ

Թանկագին կանայք,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ՝ Մարտի 8-ի առթիվ: Կանանց միջազգային օրը մենք նշում ենք մեծագույն սիրով, կանանց հանդեպ ունեցած երախտագիտությամբ եւ մեծարանքով:

Մեր ժողովրդի պատմության մեջ հայ կինը մշտապես առանձնակի դերակատարություն է ունեցել ազգապահպանության գործում: Բոլոր ժամանակներում նա, սուրը ձեռքին, հավասարապես մարտնչել է հերոս այրերի հետ, վառ պահել հայրենասիրական ոգին, մարտահրավերի նետվել թշնամու դեմ, նվաճել հաղթանակներ:

Սիրելի կանայք, այսօր էլ դուք մեր երկրի նորագույն պատմության կերտման մասնակիցն եք: Ձեր հայրենասիրական միտքն ու հոգին անվերապահորեն նվիրում եք հայրենիքին՝ ի նպաստ նրա ապահով եւ լուսավոր ապագայի:

Վերստին շնորհավորում եմ ձեզ՝ Կանանց միջազգային օրվա կապակցությումբ:

Ձեր տոնը համընկնում է գարնան զարթոնքի հետ: Ուրեմն՝ մաղթում եմ գարնանային պայծառություն ու գեղեցկություն, անձնական երջանկություն, առողջություն: Թող որ ի կատար ածվեն ձեր բոլոր նվիրական երազանքները: